ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# Ա Ր Ա Ր Ա Տ Ի   Մ Ա Ր Զ Պ Ե Տ

## Ո Ր Ո Շ Ու Մ

N 68 -Ա                                                                                             ք.Արտաշատ

„ 19 „ Մարտ 2024թ.

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿՈՂՄԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԲԱԺԻՆՆԵՐՈՒՄ ԿԱՐԳԱԲԵՐՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՑ ՏԻՐԱՊԵՏՈՂ ԱՆՁԱՆՑ ՑԱՆԿԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Հաստատել՝

1) սոցիալական ցանցերի էջերի, դրանց գրանցման և շահագործման նպատակով օգտագործվող էլեկտրոնային փոստերի, հեռախոսահամարների ցանկը՝ համաձայն Ա 1 հավելվածի.

2) սոցիալական ցանցերի էջերի ադմինիստրատիվ օգտագործողի մուտքանունների և գաղտնաբառերի գրանցամատյանի ձևը՝ համաձայն Ա 2 հավելվածի.

3) սոցիալական ցանցերի էջերը շահագործող անձանց ցանկը՝ համաձայն Ա 3 հավելվածի:

2. Սահմանել, որ

1) սույն որոշման առաջին կետի 2-րդ ենթակետով հաստատված ցանկում ներառված սոցիալական ցանցերի էջերի գաղտնաբառերը Արարատի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետի հանձնարարությամբ թարմացվում են յուրաքանչյուր երեք ամիսը մեկ անգամ.

2) սոցիալական ցանցերի էջերի ադմինիստրատիվ օգտագործողի անունները և գաղտնաբառերը, ինչպես նաև դրանց փոփոխությունները հաշվառվում և պահպանվում են Անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությունում.

3) ադմինիստրատիվ օգտագործողի անունները և գաղտնաբառերը ենթակա են պարտադիր փոփոխության մինչև սոցիալական ցանցերի էջերը շահագործող անձանց փոփոխությունը կամ պաշտոնավարման դադարեցումը:

**ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝**

Ստորագրող
ԱՐՏԱՎԱԶԴ ՆԱԶԱՐԵԹՅԱՆ
2409881092

2024-03-19 16:05:42 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**Ա. ՆԱԶԱՐԵԹՅԱՆ**

Հավելված Ա1
Հայաստանի Հանրապետության
Արարատի մարզպետի
2024թ. մարտի 19-ի թիվ 68- Ա որոշման

**ՑԱՆԿ**

## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐԻ, ԴՐԱՆՑ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈՍՏԵՐԻ, ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐՆԵՐԻ

| հհ | Սոցիալական ցանցի | | Գրանցման և շահագործման նպատակով օգտագործվող էլեկտրոնային փոստ, հեռախոսահամար |
|---|---|---|---|
| | անվանումը | էջի հղումը | |
| 1 | Facebook | https://www.facebook.com/AraratRegionalAdministration/ | Poghosyan.christin@gmail.com +374 93 420977 |
| 2 | Facebook | https://www.facebook.com/AraratRegionalAdministration/ | aramian.sona@gmail.com +374 91743074 |

Հ ա վ ե լ վ ա ծ Ա 2
Հայաստանի Հանրապետության
Արարատի մարզպետի
2024թ. մարտի 19-ի թիվ 68- Ա որոշման

Ձև 1

# ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐԻ ԱԴՄԻՆԻՍՏՐԱՏԻՎ ՕԳՏԱԳՈՐԾՈՂԻ ՄՈՒՏՔԱՆՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԳԱՂՏՆԱԲԱՌԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

| hh | Սոցիալական ցանցի | | Մուտքանուն | Գաղտնաբառ | Ամսաթիվ |
|---|---|---|---|---|---|
| | անվանումը | էջի հղումը | | | |
| | 1 | | 2 | | |
| 1 | Facebook | https://www.facebook.com/poghqris/ | Քրիսփին Պողոսյան | ******** | |
| 2 | Facebook | https://www.facebook.com/profile.php?id=100008542358580 | Sona Aramyan | ******** | |

Հ ա վ ե լ վ ա ծ  Ա 3
Հայաստանի Հանրապետության
Արարատի մարզպետի
2024թ. մարտի 19-ի թիվ 68- Ա որոշման

# Ց Ա Ն Կ

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐԸ ՇԱՀԱԳՈՐԾՈՂ ԱՆՁԱՆՑ

| hh | Սոցիալական ցանցի | | Շահագործող անձի | |
|---|---|---|---|---|
| | անվանումը | էջի հղումը | Պաշտոնը | Անունը Ազգանունը |
| 1 | Facebook | https://www.facebook.com/poghqris/ | **Արարատի մարզպետի օգնական** | Քրիտինե Պողոսյան |
| 2 | Facebook | https://www.facebook.com/profile.php?id=100008542358580 | **Արարատի մարզպետի տեղակալի օգնական** | Սոնա Արամյան |